ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆ

Գիտնականի հասակը որոշում են ոչ այնքան տարիները, որքան նրա գործերը: Այս իմաստով ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Սուրեն Երեմյանի 70 տարին իսկական ծաղկման հասակ է: Ի հիմնավորումն այս մտքի բավական է նշել, որ նրա 50-ամյա գործունեության արգասիք հանդիսացող շուրջ 100 աշխատությունների մեկ երրորդ մասը վերջին տասնամյակի ծնունդ է, ըստ որում այս գործերում արծարծված են նաև միանգամայն նոր, նախորդ շրջանում պատմաբանի կողմից չշոշափված խնդիրներ:

Սուրեն Տիգրանի Երեմյանը ծնվել է 1908 թ. մայիսի 10-ին Թբիլիսիում, բանվորի ընտանիքում: Այստեղ էլ ստացել է միջնակարգ կրթությունը: Բարձրագույնը ստացել է Երևանի համալսարանում, 1928—1931 թթ., աշակերտելով ժամանակի հայագետների փայլուն համաստեղության ներկայացուցիչներին: Այնուհետև ասպիրանտուրա է անցել դարձյալ Թբիլիսիում, իսկ 1935—1941 թթ.՝ աշխատել Լենինգրադում, ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտում: 1941 թ. մարտից սկսվում է Ս. Տ. Երեմյանի կյանքի ու գործունեության երևանյան շրջանը, որը շարունակվում է մինչև օրս և անքակտելիորեն կապված է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հետ:

Պատմաբանին վիճակվել է ունենալ այնպիսի անվանի ուսուցիչներ և խորհրդատուներ, ինչպիսիք էին Հ. Հ. Մանանդյանը, Ն. Յա. Մարը, Վ. Վ. Ստրուվեն, Հ. Ա. Օրբելին, Ի. Ա. Ջավախիշվիլին և ուրիշները, որոնք ներարկել են նրան հայրենական արևելագիտության և հայագիտության լավագույն ավանդույթները: Սակայն իր գիտական գործունեության ընթացքում հետևելով այդ ավանդույթներին, Ս. Տ. Երեմյանը փնտրել ու գտել է նաև միանգամայն այլ. շարադրված նանապարհներ, որոնք կապված են հիմնականում Հայաստանի և Կովկասի պատմական աշխարհագրության և քարտեզագրության հետ և կազմում են նրա գործունեության բերևս ամենաբնորոշ և գունեղ մասը:

Դեռևս 1930-ական թթ. վերջերից Ս. Տ. Երեմյանը ձեռնամուխ է եղել հին Հայաստանի հասարակարգի պրոբլեմի լուծման գործին: Հենվելով սովետական պատմագիտության մեջ 1930-ական թթ. հաղթանակած՝ ճիշտ արևելյան հասարակությունների ստրկատիրական կարգի մասին տեսության վրա, անվանի գիտնականը կարողացավ գտնել այնպիսի փաստարկներ, որոնք հնարավորություն տվեցին առաջին անգամ շեշտակիորեն տարբերակել հին և միջնադարյան Հայաստանի հասարակարգերը, որակելով դրանցից առաջինը որպես ստրկատիրական: Այս նոր տեսակետը տասնամյակների ընթացքում որոշակի զարգացում է ապրել, հետզհետե բեռնաթափվելով նախնական սխեմատիզմից, միս ու արյուն առնելով նորանոր հայկական նյութերից, ինչպես և Հայաստանի հարևան ու բախտակից հելլենիստական երկրների հետ օրինաչափ համադրումներից:

Ս. Տ. Երեմյանի այս հետազոտությունների բնական ծնունդն ու շարունակությունն են կազմում նրա այն աշխատությունները, որոնք նվիրված են հայ ժողովրդի պատմության գիտական պարբերացմանը և, հատկապես ու մասնավորապես, Հայաստանում ֆեոդալական հասարակության գենեզիսի խնդրին: Այս վերջինը հատուկ եռանդով մշակվում է գիտնականի կողմից այժմ, և նրա պրպտումների արդյունքները շուտով լույս կտեսնեն ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակվող՝ «Հայ ժողովրդի պատմության» ուրֆատորյակի 2-րդ հատորում:



Ս. Տ. Երեմյանին որպես հետազոտողի բնութագրում է նրա ձգտումը դեպի առավել խորին ու դժվարամատույց պրոբլեմները: Դրանց թվին է պատկանում հայ ժողովրդի ծագման ու կազմավորման խնդիրը, որը նրա ուշադրության կենտրոնում է սկսած դեռևս 1950-ական թթ.: Ժամանակի ընթացքում պատմաբանի կոնցեպցիան բնականոն զարգացում և փոփոխություններ է ապրել: Եթե սկզբում էթնոգենեզը նրա աչքում, անշուշտ Նիկողայոս Մարի տեսության ազդեցության տակ, գծագրվում էր որպես զուտ Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած էթնալեզվական ձևափոխությունների հերթական պրոցես, ապա հետագայում, պահպանելով հանդերձ խոր հետաքրքրություն լեռնաշխարհի ցեղերի նկատմամբ, հեղինակը սկսեց իր հայացքը նաև նախորդ փուլում մեր պատմագրության մեջ գրեթե մերժված հնդեվրոպական եկվոր տարրի վրա: Այլ գիտնականների՝ այս տարրին լեզվական առումով տրված գնահատականին Ս. Տ. Երեմյանը ավելացրեց տեղանվանական այն առնչությունները, որոնք նա հայտնաբերեց Հայկական լեռնաշխարհ—Փոքր Ասիա—Բալկաններ երկրամասերի միջև, որպիսի առընչությունները հաստատում էին հայ ժողովրդի հնդեվրոպական բաղադրատարրի ուղին արևմուտքից արևելք, դեպի ժողովրդի կազմավորման օջախը: Այսօր էլ պատմաբանը շարունակում է կատարելագործել իր տեսությունը և հարստացրել է այն Հայկական լեռնաշխարհում ժողովրդակազմավորման կոնկրետ ընթացքի շորս հաջորդական փուլերի բացահայտմամբ, փուլեր, որոնք կապվում են շորս աշխարհագրական կենտրոնների հետ: Դրանցից առաջինը Հայասա-Ագին է (հետագայի Փոքր Հայքի սահմաններում), ուր տեղի է ունեցել ամենանախնական խմորումը, որի մեջ ներգրավվել են մերձակա խեթական աշխարհի տարրերը և գոյացել է մեր ժողովրդի «հայ» ինքնանվանումը: Երկրորդը՝ Արմե-Շուպրիա երկիրն է, ուր հնդեվրոպական շիքը սերտ համագործակցության մեջ է մտել խուրրիական տարրի հետ և ծագել է ժողովրդի «արմեն» անվանումը: Երրորդը՝ Վանա լճի ավազանն է, նրա արևելյան շրջանը, որտեղ կլանվել է կարևորագույն՝ ուրարտական բաղադրատարրը: Չորրորդը և եզրափակիչը՝ Արարատյան դաշտն է, որի ներգրավմամբ ժող-

վերդակազմավորման ընթացքը հիմնականում ավարտվել է և որը դարձել է վաղ հայկական պետական կազմավորումների սիրտը: Ս. Տ. Երեմյանի հետազոտությունները այս բնագավառում տանում են դեպի այն լեզվաէթնիկական այլազան տարրերի գնահատման նշգրտումը, որոնց համագործակցությունը և ինտեգրացումը հանգեցրել են Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի՝ այդ երկրամասում պատմականորեն առաջին ժողովրդի կազմավորմանը:

Ինչպես նշվեց, Ս. Երեմյանի գիտական շահագրգռություններ շարքում առանձնահատուկ տեղ է գրավում պատմական աշխարհագրությունն ու քարտեզագրությունը: Նրա կազմած հարյուրավոր քարտեզներ դրսևորում են հայ ժողովրդի պատմաաշխարհագրական զարգացման յուրահատուկ քայլը և փուլը՝ սկսած հնագույն ժամանակներից: Հեղինակի նպատակն է ամփոփել այդ ամբողջը մոնումենտալ «Հայաստանի պատմական ատլասի» մեջ, աշխատություն, որը իսկական շրջադարձ առաջ կբերի գիտության համապատասխան բնագավառում: Այսօր էլ Ս. Երեմյանի հեղինակած տասնյակ քարտեզներ, հրապարակվելով հանրապետական, միութենական և արտասահմանյան շատ հրատարակություններում, լայն ճանաչում են գտել և հայ պատմաաշխարհագրությունն ու քարտեզագրությունը հասցրել համաշխարհային առաջավոր գիտության մակարդակին:

Հատուկ պետք է անդրադառնալ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» (Երևան, 1963) մենագրությանը, որի մեջ կենտրոնացել են նրա հետազոտական բոլոր կարողությունները: Այս աշխատությունը, ինչպես երևում է վերնագրից, նվիրված է հայ մատենագրության կարևորագույն կոթողներից մեկի՝ VII դարում ստեղծված «Աշխարհացույցի» բազմակողմանի ուսումնասիրմանը: Ս. Երեմյանը, հենվելով իրեն նախորդած հետազոտողների նվաճումների վրա, դրել է ու մեծ մասամբ համոզիչ կերպով լուծել այն հիմնական խնդիրները, որոնք ծագում են այդ կոթողի կապակցությամբ: Պատմաբանի առավել կարևոր եզրահանգումը ըստ երևույթին պետք է համարել այն, որ նա հայտնաբերել է «Աշխարհացույցի», այսպես ասած, «ժանրային» պատկանելությանը: Դա ոչ թե ինքնամփոփ տեքստ է կամ աշխարհագրական ձեռնարկ, ինչպես կարծել են նախորդ հետազոտողները, այլ բացատրագիր, ուղեցույց քարտեզի կամ, ավելի հիշտ, մի շարք քարտեզներից բաղկացած համաշխարհային ատլասի համար: Թեև իրենք քարտեզները (ատլասը) մեզ չեն հասել, սակայն հենց պահպանված կից բացատրագիրը (որը ժառանգել է ողջ ատլասին վերաբերող «Աշխարհացույց» անվանումը) գրեթե սպառիչ պատկերացում է տալիս նրանց քանակության, բովանդակության և ծանրաբեռնվածության մասին: Այսպիսի մեկնաբանությունը գիտության առջև բացում է հայ քարտեզագրության պատմության մի շատ նշանակալից դրվագ:

Աշխարհացույց-ատլասը, ինչպես պարզել է Ս. Տ. Երեմյանը, բաղկացած է եղել շուրջ 15 քարտեզներից, որոնց մեջ ընդգրկվել է ժամանակի հայտնի ամբողջ աշխարհը, սկսած Եվրոպայի արևմտյան ծայրամասերից մինչև Չինաստան և Հնդկաչին: Այդչափ լայն շրջանակներն անշուշտ պայմանավորված են ատլասի հեղինակի ձեռքի տակ անտիկ (հունահռոմեական) աշխարհագրության տվյալների առկայությամբ: Այսպիսով, հայ միջնադարյան

գիտական մտքի սույն կորողը իր նշանակությամբ դուրս է գալիս հայ իրականության սահմաններից և պահպանել է, Եվրոպայում նույն այդ ժամանակաշրջանում գիտության տեղատվության ու անկման պարագաներում, անտիկ առաջավոր գիտության լավագույն ավանդույթները:

Զարգացնելով «Աշխարհացույցի» աղբյուրների մասին իր դրույթը, Ս. Տ. Երեմյանը պարզել է նաև, որ հատկապես Մեծ Հայքի, նրան հյուսիսից հարող Վիրքի և Աղվանքի, ինչպես և մասամբ Իրանի համար միջնադարյան հայ հեղինակը (Ս. Երեմյանը համաձայն չէ երկը Անանիա Շիրակացուն վերագրող գիտնականների հետ, և համարում է այն մի փոքր ավելի վաղ շրջանի՝ VII դարի սկզբի գործ), ի լրումն անտիկ աղբյուրների, ունեցել է մի շարք ստույգ՝ պաշտոնական-վավերագրական աղբյուրներ: Դրանցից են, օրինակ, Արշակունյաց և մարզպանական շրջաններում կատարված աշխարհագիրները, մասնավորապես, IV դարի սկզբին, 439 թ. և 570 թ. կատարվածները: Սրանով հսկայական չափով ավելանում է «Աշխարհացույցի» համապատասխան հատվածների հուսալիությունը որպես պատմական աղբյուրի:

Խնդրո առարկա մենագրության հետազոտական բարձրակետն է հանդիսանում Ս. Երեմյանի փորձը՝ վերակազմելու Մեծ Հայքի քարտեզը ըստ «Աշխարհացույցի» տվյալների՝ ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա: Այսպիսի մի նորարարական գործի ձեռնարկելու համար անհրաժեշտ է, բացի գիտական խիզախությունից, նաև պատմաաշխարհագրական գիտելիքների հսկայական պաշար: Ս. Երեմյանի ունեցած պաշարը իսկապես եզակի է՝ անսպառ: Նա իր հիշողության մեջ է պահում ողջ պատմական Հայաստանի ու մերձակա երկրների տոպոնիմիկան, սկսած այն ժամանակներից, երբ դրանց մասին ստանում ենք առաջին գրավոր հաղորդումները, այսինքն՝ մ. թ. ա. III—II հազարամյակներից և վերջացրած ներկա վիճակով: Տեղանունների այդ պաշարը ներառնում է սեպագիր (ասսուրական, խեթական, խուռրիական, ուրարտական, հին պարսկական), եբրայերեն, հունարեն, լատիներեն, հայերեն, պահլավերեն, պարսկերեն, ասորերեն, արաբերեն, թուրքերեն, վրացերեն, ռուսերեն լեզուներով աղբյուրների տված տեղանունների ամբողջությունը: Եվ ահա ողջ այս ապարատը գործի է դրվում, երբ «Աշխարհացույցի» այս կամ այն տեղանունը տեղադրվում է քարտեզի վրա: Այսպիսով, Ս. Երեմյանի կազմած քարտեզը տասնյակ տարիների ընթացքում կատարած աշխատանքի և հավաքած գիտելիքների մի կիզակետ է:

«Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» մենագրության տրամաբանական շարունակությունն է կազմում հեղինակի՝ 1972—1973 թթ. «Պատմաբանասիրական հանդեսում» հրատարակված հոդվածաշարը՝ «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ» ընդհանուր վերնագրով: Այստեղ դրսևորվում է մեր հեղինակի կարողությունների ևս մի, այն է՝ բանասիրական կողմը:

Ս. Տ. Երեմյանը մի շարք հետազոտություններ է կատարել նաև Հայաստանի քաղաքական պատմության բնագավառում: Վերը հիշատակված «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի I հատորում (Երևան, 1971, պատասխանատու խմբագիր Ս. Տ. Երեմյան) նա տվել է մ. թ. ա. VII—VI դդ. հայկական առաջին պետական կազմավորումների պատմության անդրանիկ հանգամանալից շարադրանքը: Վերջին տարիներին պատմաբանը հրապարա-

եղել է նոդվածաշար Հայաստանի պատմության ամենամութ ժամանակաշրջաններից մեկի՝ մ. թ. II—III դդ. վերաբերյալ, առաջարկելով ժամանակագրական մի շարք նշգրտումներ, ինչպես և նոր տեսակետներ Հայաստանի վինակի և քաղաքականության վերաբերյալ նրան երկու կողմից ճնշող նզոր ռազմաքաղաքական ուժերի՝ հռոմեական կայսրության և պարթևական, ապա սասանյան Իրանի նկատմամբ:

Ս. Տ. Երեմյանը վրացերենի և վրաց պատմության քաջ գիտակ է և այս հանգամանքը իր դրոշմն է դրել նրա՝ միջնադարյան պատմությանը վերաբերող աշխատությունների վրա: Դրանց մի մասում դիտարկվում են Հայաստանի և Վրաստանի սերտ քաղաքական առնչությունները, որոնք առանձին փուլերում վերածվել են պատմական նակատագրի ընդհանրության: Նրա արժեքավոր աշխատությունները Բագրատունյաց Հայաստանի, Մահկանաբերդի Արծրունիների, Զաքարյան շրջանի մասին, Աղվանքի ու Հյուսիսային Կովկասի ժողովուրդների պատմության հարցերի պրպտումների հետ միասին Ս. Տ. Երեմյանին դարձնում են արդի խոշորագույն կովկասագետներից մեկը:

Պատմագիտության այն բնագավառների թվարկումը, ուր իր ներդրումներն է արել Ս. Տ. Երեմյանը, չի սպառում նրա գիտական շահագրգռությունների ոլորտները: Դրանց մեջ են նաև ինագիտությունը, ազգագրությունը, գրականությունը, լեզվաբանությունը և այլն, որոնց նվաճումները նա հմուտ կերպով ծառայեցրել է իր պատմական և պատմաաշխարհագրական տեսակետների հաստատմանը: Գիտնականի այս բազմազան հետաքրքրությունները իրենց արտացոլումն են գտել նաև նրա կատարած մեծ գիտակազմակերպչական աշխատանքի մեջ: Մի շարք տարիներ Ս. Տ. Երեմյանը եղել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, ղեկավարել է ինստիտուտի հին և միջնադարյան պատմության բաժինը, այսօր էլ վարում է հին պատմության բաժինը: Այս ասպարեզում նրա աչքի ընկնող ներդրումն է պատմաբանների բարձրակարգ կադրերի պատրաստումը՝ իր անձնական ղեկավարության ներքո կամ գիտական այլ կենտրոններում (հատկապես Լենինգրադում) նրանց ուսուցումն ու կատարելագործումը ապահովելու միջոցով: Այսօր նրա սաները գլխավորում են հայ պատմագիտության առաջին շարքերում:

Ս. Տ. Երեմյանը ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ 1953 թ., ակադեմիկոս՝ 1963 թ.: 1955—1968 թթ. ղեկավարել է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքը: Նա ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ է, ունի բարձր կառավարական պարգևներ: Սովետական պատմագիտության զարգացմանը նպաստելու համար և իր ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Ս. Տ. Երեմյանը պարգևատրվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ